ՕՏԱՐ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԵՐԿՐՈՒՄ (ԺԷ ԴԱՐ)

ՀԱԿՈԲ ՓԱՓԱԶՅԱՆ

Նախապես հրապարակած երկու նույնանուն հոդվածներով փորձել ենք տալ Արարատյան երկրում մահմեդական տիրակալության պարբերացումն ու ճշգրտել հաջորդաբար այնտեղ իշխած թուրքմեն ամիրների, սեֆյան բեկլարբեկիների, ինչպես նաև օսմանյան փաշաների կարճատև նվաճումների ժամանակագրությունը[1]։

Հիմք ընդունելով սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում նկատված տեղաշարժերն ու վարչա-քաղաքական շրջադարձային փոփոխությունները, 450-ամյա պատմական այդ ժամանակահատվածի հետևյալ պարբերացումն է առաջարկված.

1. Թուրքմենական ամիրության շրջան (XV դ.)։
2. Վաղ Սեֆյան կամ պարսկա-օսմանյան փոփոխակի իշխանության շրջան (1501—1603)։
3. Նոր Սեֆյան շրջան (1603—1724)։
4. Քաղաքական նոր վայրիվերումների և կիսանկախ խանության շրջան (1724—1795)։
5. Կաջարյան տիրապետության կամ սարդարության շրջան (1795—1827)։

Նախորդ հոդվածներում քննության են առնված առաջին երկու շրջանների (XV—XVI դդ.) ժամանակագրության հարցերը։ Ներկա հոդվածը նվիրված է հաջորդ՝ Սեֆյան, առավել կայուն և երկարատև ժամանակահատվածի (1603—1724 թթ.) պատմությանը։

XVII դ. սկզբում Արարատյան երկիրը ենթարկվեց նոր աղետների, որոնք կանխորոշեցին երկրի քաղաքական և տնտեսական կյանքի հետագա ընթացքը։ Ավերիչ արշավանքներն ու բնակչության զանգվածային տեղաշարժերը շարունակվեցին մինչև 1630-ական թվականները և ավարտվեցին 1639 թ. Սեֆյան Իրանի և Օսմանյան Թուրքիայի միջև կնքված հաշտությամբ։

Ատրպատականի և Անդրկովկասի վերանվաճման համար 1603 թ. աշնանը Շահ Աբբաս Ա-ի ձեռնարկած արշավանքների հետևանքով նորից վերականգնվեց կըզըլբաշների տիրապետությունը Արևելյան Հայաստանում։ Ութ ամիս տևող պաշարումից հետո՝ 1604 թ. հունիսին, վերագրավվեց Երևանի բերդը, որը 1583 թ. սկսած գտնվում էր թուրք փաշաների ձեռքում։ Բերդի գրավումից անմիջապես հետո Զուխուր-Սա'դի վիլայեթի բեկլարբեկիությունը, որին այնուհետև ենթարկվելու էր նաև Թուման-ե Նախչևանի օլքան, տրվեց մարտերում աչքի ընկած, Շահ Աբբասի հավատարիմ զորականներից Ամիր-Գունա խանին[2]։ Նա կըզըլբաշ Կաջար մեծ ցեղի Աղջա-կոյունլու օյմաղից էր։

---

1 ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1960, № 7—8 և ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1973, № 6։

2 Իսքանդար-բեկ Թորքեման, Մունշի, Թարիխ-ե ալամարա-յե աբբասի, Թեհրան, 1957 (պարսկ. բնագիր), հ. II, էջ 638 (այսուհետև՝ Իսքանդար Մունշի)։

որ նախքան այս արշավանքը վարում էր Սեֆևիների նախկին մայրաքաղաք Ղազվինի դարուղայի պաշտոնը և հենց այստեղից էլ իր հրամանատարության տակ գտնվող ղորչիների և ղուլամների ջոկատներով միացավ դեպի Ատրպատական արշավող շահի բանակին։

Քաջ գիտակցելով սկսված արշավանքի և ծավալվող իրադարձությունների նշանակությունն իր զինվորական և քաղաքական կարիերայի համար, Ամիր-Գունա խանն անվերապահ նվիրվածությամբ և մատուցած ծառայություններով ջանում էր վստահություն ներշնչել և ձեռք բերել շահի համակրանքը։ Այդ բանին նպաստեցին Երևանի պաշարման ամիսներին, շահի հրահանգով նրա դեպի Գանձակ, Շորագյալ և Արևմտյան Հայաստանի մերձակա շրջանները կատարած կողոպտիչ արշավանքները և հատկապես ծավալած դիվանագիտական գործունեությունը, որոնց շնորհիվ քրդական Հաքքարի, Մահմուգի, Դունբուլի և այլ խոշոր ցեղերի աշիրաթապետերը եկան Երևան և հպատակություն հայտնեցին շահին[3]։

Սակայն խանը բեկլարբեկիության պաշտոնը վարելու ժամանակ չունեցավ։ Պատերազմական գործողությունները դեռ շարունակվում էին և սպասվում էր թուրքական զորքերի մեծ հակահարձակում։ Կըզըլբաշները Երևանի գրավումից հետո կրկին ավերել էին Գանձակն ու շրջակա գավառները և ասպատակել մինչև Կարս և Զարիշատ, երբ լուր ստացվեց, որ Ջղալ-օղլի Սինան փաշան բանակ է դրել Մշո դաշտում և շարունակում է զորաժողովը Երևան արշավելու համար։ Սկսվում էր կըզըլբաշների մեծ նահանջը, որի ընթացքում Ամիր-Գունա խանը Արդաբիլի Զոլֆեղար խանի հետ միասին մեծ փութաջանությամբ պետք է ի կատար ածեր իր իշխանությանը հանձնված Արարատյան երկրի և Նախջևանի շրջակայքի բնակչության տեղահանման, քաղաքների ու գյուղերի ավերման, ցանքսերի ու հացահատիկի պաշարների հրկիզման մասին շահի անողոք հրամանը[4]։

Նահանջելով Կարսի կողմերից, Շահ Աբբասն իր բանակով նախ կանգ առավ Աղջաղալայում, ապա արագ երթով եկավ Վաղարշապատ։ Երբ նա Վաղարշապատում էր, Ջղալ-օղլու բանակն արդեն հասել էր Կարս։ Ուստի, շահը հրամայեց աճապարանքով քշել տեղահանված և Արարատյան դաշտում կուտակված ժողովրդին։ Անասելի տառապանքների և ծանր կորուստների գնով գաղթականների ահռելի զանգվածն անցավ Արաքսը և կըզըլբաշ զինվորների մտրակների ներքո քշվեց դեպի Իրանի խորքերը։

Սրընթաց նահանջով Շահ Աբբասին հաջողվեց խույս տալ թուրքական գլխավոր ուժերի հետ ճակատամարտ տալուց, իսկ վերջիններս անցնելով ամայացած վայրերով, Արաքսի ափը հասան հյուծված և ուժասպառ վիճակում։ Սինան փաշան հարկադրված էր ենթարկվել գազազած ենիչերիներին և առանց հակառակորդի հետ ուժերը չափելու, գնալ ձմեռելու Վանում։

Այս ընթացքում, երբ հակառակորդ կողմերի գլխավոր ուժերը բանակ էին դրել Թավրիզում և Վանում, երկուստեք փորձեր էին արվում տիրելու Արարատյան երկրի և Նախջևանի ամրություններին։ Այսպես, Առաքել Դավրիժե-

---

3 Իսքանդար Մունշի, հ. II, էջ 721։

4 Նույն տեղում, էջ 721, տե՛ս նաև Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Վաղարշապատ, 1896, էջ 40։

ցու վկայությամբ, Սինան փաշան իր կրտսեր զորականներից Օմար աղային Վանից ուղարկում է Երևան և Նախջևան, հրահանգելով պահել երկիրը և թույլ չտալ կըզըլբաշներին վերստին հաստատվելու այնտեղ։ Սակայն շահն իր հերթին այնտեղ է ուղարկում Ամիր-Գունա խանին, որը, պատերազմելով Օմար աղայի դեմ, սպանում է նրան և, հաստատվելով Նախջևանում, «պահէր երկիրն որպէս և հրամայեալ էր նմա շահն»[5]։

Իսքանդար Մունշին ևս բավական մանրամասն անդրադարձել է այս ժամանակաշրջանի անցուդարձերին։ Որպես վակիենվիս (դեպքերի արձանագրող) նա միշտ եղել է շահի մերձավորների շարքում և կազմել կարևոր իրադարձությունների ժամանակագրությունը։ Նրա պատմածները ոչ թե հետագա հիշողություններին, այլ տեղն ու տեղը կատարված գրառումների արդյունք են։ Մունշու տվյալներով՝ 1604—1605 թթ. ձմռանը իրոք Ամիր-Գունա խանն իր զորքերով ամրացել էր Երնջակի բերդում, որտեղից նա մի քանի անգամ դուրս է գալիս ու պարտության մատնում Մուհամմադ Թաքալուին, որն, անցնելով թուրքերի կողմը, Նախջևանի վիլայեթը ստացել էր որպես սանջաք և կռիվներ էր մղում Շահ Աբբասի կողմից Նախջևանի հաքիմ նշանակված Մակսուդ-սուլթան Քանգարլուի դեմ։ Այնուհետև նա հաղթական կռիվներով ստիպում է փախուստի դիմել Մուստաֆա փաշայի և Կահիր փաշայի զորքերին, որոնք Վանից եկել էին Ամիր-Գունա խանին Երնջակի բերդից արտաքսելու։ Նույն աղբյուրից իմանում ենք նաև, որ Մուհամմադ խան Թաքալուն, որին Սինան փաշան ամիրայության աստիճան էր շնորհել, կարողացել է Ջուխուր-Սա'դի տարբեր մահալներից զգալի թվով կռվողներ հավաքել և մարտեր մղել Ամիր-Գունա խանի դեմ[6]։

Երկու աղբյուրներում էլ որոշակի խոսք չկա այն մասին, թե այդ տարիներին ում ձեռքում էր գտնվում Երևանի բերդը։ Պարզ է սակայն, որ ընդհարումները մեծ մասամբ տեղի են ունեցել Նախջևանի շրջակայքում և մերձարաքսյան բնակավայրերի շուրջ, իսկ Երնջակի բերդը եղել է կըզըլբաշների գլխավոր ամրությունն ու Ամիր-Գունա խանի հիմնական ռազմակայանը։

1606 թ. վերսկսվեցին պատերազմական գործողությունները։ Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Թավրիզից հյուսիս գտնվող Սոֆյան ավանի մոտ, որտեղ Սինան փաշան ջախջախիչ պարտություն կրեց և փախավ։ Շարունակելով արշավանքը, Շահ Աբբասը 1607 թ. գրավեց Լոռու, Դմանիսի և Թիֆլիսի բերդերը և ձեռք բերած ավարն ամբողջությամբ փոխադրեց Երևանի բերդը։ Նա այստեղ թողեց հատուկ ամրաշեն զորամասեր, որոնք հիմնովին վերանորոգեցին բերդը, ամրացրին պարիսպները և մի քանի ամիս հետո գնացին Նախջևան՝ միանալու կըզըլբաշների գլխավոր բանակին[7]։

Իսքանդար Մունշին չափազանց հետաքրքիր տվյալներ է հաղորդում 1607—1610 թթ. Արարատյան երկրի վերանորոգման և վերաբնակեցման ուղղությամբ կատարվող միջոցառումների մասին։ «Երբ հաղթական զինվորները ձեռնարկեցին Երևանի բերդի նորոգումը և բերդը լցրին անհրաժեշտ պաշարով ու զինամթերքով,— գրում է նա,— այդ ժամանակ Ամիր-Գունա խանին և նրա

---

5 Ա. Դավրիժեցի, էջ 71—72։

6 Իսքանդար Մունշի, հ. II, էջ 676—677։

7 Նույն տեղում, էջ 716—721։

հպատակներին, որոնք մինչև այդ երբեմն Երնջակում, Օրդուբադում և երբեմն էլ Նախջևանում էին լինում, կարգադրվեց գնալ և հաստատվել այնտեղ։ Ապավինելով աստծո ողորմածությանը և արքայական անվախճան բարերարությանը, Ամիր-Գունա խանը գնաց բնակություն հաստատելու այդ ավերակ ու անմարդաբնակ վայրում, որտեղ շինության ու կենդանության հետք անգամ չէր մնացել։ Իր հպատակներից և ենթակա մարդկանցից նրանց, որոնց նկատմամբ նա առավել վստահություն ուներ, տեղավորեց բերդի ներսում, իսկ մյուսներին բնակեցրեց բերդից դուրս [քաղաքում] և ավերակ գյուղատեղերում։ Ազերբայջանում գտնվող տարբեր էլերից, ուլուսներից և թարաքամաներից շատերին նա համոզեց ու բերեց Երևան, Կաջարների Աղջա-կոյունլու օյմաղին և Մուսա-օղլի Բայաթ էլին, որոնք բարձրագույն հրամանի համաձայն Արաղից հատկապես նկել էին ծառայելու նրան, բոլորին էլ Երևանի ու Շարուրի հարմար վայրերում յուրդեր ու կրշլաղներ տվեց»[8]։

Մունշիի հաղորդած տվյալներից պարզ երևում է, թե որքան դաժանորեն է ի կատար ածվել բնակչության տեղահանումը։ Արարատյան երկրի կենտրոնական գավառները լիովին ամայացած են եղել, հողերը մնացել են անմշակ։ Խիստ հրաման է տրված եղել, որ քանի դեռ թուրքերի հետ հաշտություն չի կայացել, այդ կողմերում վար ու ցանք չկատարվի, որպեսզի հակառակորդը նոր արշավանքի դեպքում չկարողանա պաշար ձեռք բերել։ Ամիր-Գունա խանը մեծ դժվարությամբ կարողացել է շահից թույլտվություն ստանալ Երևանի բերդի շրջակայքում եղած հողերը բերդապահ զինվորների ձեռքով մշակելու համար։ Ուշագրավ է այն փաստը, որ հողը մշակելու համար տեղում լծկան անասուններ չեն եղել, և զինվորները այդպիսիք հափշտակել, բերել են Արևմտյան Հայաստանի մերձակա շրջաններից[9]։ Այդ նշանակում է, որ լիակատար ամայություն էր տիրում Արարատյան դաշտի երբեմնի մարդաշատ, շեն ու բարեբեր գյուղերում։

Ուշագրավ են նաև երկրի վերաբնակեցման և տնտեսության վերականգնման ուղղությամբ Ամիր-Գունա խանի ծավալած գործունեության մասին Զաքարիա Սարկավագի հաղորդած տեղեկությունները[10]։

Մերթընդմերթ բորբոքվող ռազմական գործողությունների արանքում և Արևմտյան Հայաստանն ասպատակելու ընթացքում Ամիր-Գունա խանը խորանում էր մինչև Վանա լճի առափնյա գավառները և մեծ թվով հայ ռայաթների բռնի տեղահանելով, բնակեցնում էր Արարատյան երկրի ամայացած գյուղերում։ Գյուղատնտեսությունը վերակենդանացնելու նպատակով նա ժամանակավոր դյուրություններ էր ստեղծում նորաբնակների համար, զբաղվելով հատկապես Արարատյան երկրի համար բացառիկ նշանակություն ունեցող ոռոգման ցանցի վերանորոգմամբ։

Երկրի արագ վերաբնակեցման և տնտեսության վերականգնման հարցով շահագրգռված էր ոչ միայն վիլայեթի բեկլարբեկին, որը մեծ բաժին ուներ հարկային եկամուտներից։ Ակներև էր նաև այն իրողությունը, որ ստրատեգիական նպատակով սահմանամերձ այս կարևոր երկրամասի բռնի ամայացումով վերացվել էր կարևոր մի պատնեշ և անարգել ճանապարհ բացվել

---

[8] Նույն տեղում, էջ 740։

[9] Նույն տեղում։

[10] Զաքարիա Սարկավագ, Պատմագրութիւն, հ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 45—47։

ահեղ հակառակորդի առաջ։ Այնպես որ հայության վերաբնակեցումը ոչ միայն տնտեսական, այլև պետական-քաղաքական տեսակետից խիստ կարևոր էր։ Ինչպես դիտենք, հետագա տասնամյակներում և հատկապես XVIII դ. սկզբներին, թուրքական ներխուժման ժամանակ, դարձյալ հայերն էին, որ համառ դիմադրություն ցույց տվին օսմանցիներին։

1625 թ. Գյորգի Սահակաձեի գլխավորած ապստամբության դեմ մղվող կռիվներում Ամիր-Գունա խանը մահացու վերք ստացավ և երկու ամիս անց մեռավ Երևանում։ Շահ Աբբասը Զուխուր Սա'դի բեկլարբեկիությունը տվեց նրա ավագ որդուն՝ Թահմասպկուլի խանին։

Նույն աղբյուրները հաստատում են, որ Թահմասպկուլի խանի օրոք և Արարատյան երկիրը հետևողականորեն շարունակվում էր վերաբնակեցվել Արևմտյան Հայաստանի բռնի տեղահանված հայ բնակչությամբ[11]։

Թահմասպկուլի խանի բեկլարբեկիությունը տևեց 10 տարի և ընդհատվեց 1635 թ. ամռանը՝ Սուլթան Մուրատի կողմից Երևանի բերդի գրավումով։ Բերդի պաշարումը տևեց ընդամենը 7 օր, որից հետո խանն անօգուտ համարելով հետագա դիմադրությունը, բերդի բանալիներն ուղարկեց Սուլթան Մուրատին։ Իսքանդար Մունշին և Զաքարիա Սարկավագը միաբերան վկայում են, որ բերդի շուտափույթ անկմանը նպաստել է խանի վաքիլ Մուրադ-բեկի և այլ մերձավորների դավաճանությունը[12]։

Այս դեպքերից հետո Թահմասպկուլի խանն այլևս չէր կարող ներկայանալ շահին։ Նա քաղաքական ապաստան խնդրեց օսմանցիներից և կալվածներ ստանալով Կ. Պոլսի արվարձան Սկյուտարում, տեղափոխվեց Թուրքիա։

Հաջորդ տարվա ապրիլի սկզբին, շուրջ 3,5 ամսյա պաշարումից հետո, Երևանի բերդը վերագրավվեց Շահ Սաֆիի կողմից։ Թուրքերը ծանր կորուստների գնով գիմաղբեցին մինչև վերջ։ Մեծ թվով բարձրաստիճան զինվորականներ գերի վերցվեցին և ուղարկվեցին Սպահան։ Ավերված բերդը հիմնովին վերանորոգելուց հետո շահը Զուխուր Սա'դի բեկլարբեկիությունը տվեց Ֆարսի վիլայեթի Լար քաղաքի հաքիմ Քյալբ-Ալի խանին, որը ակտիվ մասնակցություն էր ունեցել բերդի գրավման համար մղված մարտերում[13]։

Թուրք-իրանական շուրջ 3,5 տասնամյակ (1603—1639) տևող այս պատերազմն ավարտվեց 1639 թ.՝ Կ. Պոլսում կնքված հաշտությամբ, որով Արաբական Իրաքն անցնում էր Թուրքիային, իսկ Անդրկովկասի և հատկապես Արևելյան Հայաստանի սահմանները մնում էին անփոփոխ։ Այսպիսով, Արարատյան երկիրը, որի բնակչության մեջ, ինչպես տեսանք, սկսած 1603 թ. զգալի տեղաշարժեր էին տեղի ունեցել, նորից բավական երկար ժամանակով (շուրջ 80 տարի) մնում էր կըզըլբաշների տիրապետության տակ։

Ի տարբերություն Սեֆևիների պետության այլ բեկլարբեկիությունների, որոնք կենտրոնական իշխանության թուլության հետևանքով մեծ մասամբ վերածվել էին ժառանգական ֆեոդալական տիրույթի[14], Զուխուր Սա'դում բեկլարբեկիության պաշտոնը Կաջար ցեղի սեփականությունը չդարձավ։ Դեռևս

---

11 «Ջեյլ-ե Թարիխ-ե ալամարա-յե աբբասի», Թեհրան, 1938, էջ 79 (պարսկ. բնագիր)։ Այսուհետև՝ ՋԹԱԱ։

12 Նույն տեղում, էջ 169, Զաքարիա Սարկավագ, հ. II, էջ 4—6։

13 Ա. Դավրիժեցի, էջ 642, հմմտ. ՋԹԱԱ, էջ 182։

14 И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Л., 1949, стр. 122—127.

Շահ Աբբաս Ա-ի ժամանակներից որդեգրվեց մի քաղաքականություն, ըստ որի ծայրամասային բեկլարբեկիները նշանակվում էին ոչ թե կըզըլբաշ ցեղերի տոհմիկ առաջնորդներից, այլ շահի արքունի գվարդիայի զինվորականության՝ «ղուլամների», շարքերից, որոնք, չնայած իրենց ոչ տոհմիկ ծագմանը, արժանանում էին «խան» տիտղոսին և զբաղեցնում բեկլարբեկիության բարձր պաշտոնը։ Ձգտելով ստեղծել հզոր կենտրոնաձիգ պետություն, Շահ Աբբաս Ա-ն վարում էր քոչվորության ռազմա-քաղաքական հեղինակությունը նսեմացնելու որոշակի քաղաքականություն։ Ստեղծված նոր տիպի կադրային բանակը հիմնականում կազմված էր կենտրոնական Իրանի ծագումով պարսիկ ազնվականության ներկայացուցիչներից։ Այդ նոր զինվորականությունը հակադրվում էր ռազմա-ֆեոդալական բարձրաստիճան զինվորականությանը, իսկ հաճախ նրանց միջոցով ճնշվում էր առանձին քոչվոր ֆեոդալների որևէ անջատողական շարժում։ Այս քաղաքականության շեշտված արտահայտություններից էր նաև այն իրողությունը, որ սահմանամերձ մարզերն ու բեկլարբեկիությունները չէին վստահվում անվանի և տոհմիկ կըզըլբաշներին։ Ջուխուր Սա՝դի բեկլարբեկիությունը այս տեսակետից խիստ բնորոշ օրինակներից է։

1604—1639 թթ. երկուստեք ձեռնարկվող արշավանքների շրջանում էր միայն, որ Երևանի բեկլարբեկիությունը ժառանգաբար գտնվում էր Աղչակոյունլու-կաջար ցեղից Ամիր-Գունա խանի և նրա որդու՝ Թահմասպկուլի խանի ձեռքում։ Իսկ այնուհետև, մինչև հաջորդ դարի 20-ական թվականները, երբ Անդրկովկասը վերանվաճվեց օսմանցիների կողմից, իրար հաջորդած 17 խաներից և տեղապահներից միայն երկուսն էին հեռավոր կերպով առնչվում Ամիր-Գունա խանի ընտանիքին։

Այսպես, 1636 թ. Երևանի վերագրավումից հետո, ինչպես տեսանք, Ջուխուր-Սա՝դի բեկլարբեկի նշանակվեց Լաչի հաքիմ Քյալբ-Ալի խանը, որն իշխեց ընդամենը 3 տարի (1636—1639)։ Նրա մահից հետո խան նշանակվեց Ջաղաթա (Քյոթուգ) Մուհամմադկուլի խանը, որը գործուն մասնակցություն էր ունեցել նույն թվականին Կ. Պոլսում կնքված հաշտության պայմանագրի մշակմանը[15]։ Սկսած 1647 թ. Ջուխուր-Սա՝դի բեկլարբեկիությունը գտնվում էր ծագումով վրացի Քեյխոսրով խանի ձեռքում[16]։ Սա հազիվ 5 տարի մնաց Երևանում և 1652 թ. Կաջարների և Երևանի քալանթար Ղարաղուբաթի ու այլոց խարդավանքների հետևանքով, Շահ Աբբաս Բ-ի հրամանով հեռացվեց պաշտոնից և նրա փոխարեն խան նշանակվեց շահի ղուլամներից Մուհամմադկուլի խանը[17]։

Շուտով Մուհամմադկուլի խանը ևս ամբաստանվեց դիվանական հարկերի դիմաց գանձված գումարների յուրացման, չարաշահումների և այլ հանցագործությունների մեջ։ Նրան ներկայացված մեղադրանքների շարքում կարևոր տեղ էին գրավում էջմիածնի վանքի և հայ հոգևորականության (հատկապես Փիլիպոս կաթողիկոսի և Հովհաննավանքի Հովհաննես եպիսկոպոսի)

---

15 Ջաքարիա Սարկավագ, հ. II, էջ 29, ՁԹԱԱ, էջ 246։

16 «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», I, Հրովարտակներ, պրակ II, կազմեց Հ. Դ. Փափազյան, Երևան, 1959, վավ. 34 (այսուհետև՝ Հրովարտակներ II)։

17 Ջաքարիա Սարկավագ, հ. II, էջ 41, հմմտ. Ջաքարիա Ագուլեցի, Օրագրություն, Երևան, 1938, էջ 41։

նկատմամբ դրսևորած շահատակություններն ու անհանդուրժողական վերաբերմունքը։ Շահ Աբբաս Բ-ն, որը հայտնի նկատառումներով հովանավորում էր Էջմիածնի կղերին, Աղերբայշանի վեզիր Միրզա Իբրահիմին հրահանգեց անմիջապես ձերբակալել Մուհամմադկուլի խանին և բանտարկել Կահկահա բերդում, իսկ Զուխուր-Սա'դի բեկլարբեկիությունը 1656 թ. տվեց իր ղուլերից մեկ ուրիշին՝ մեծահարուստ Նաջաֆկուլի խանին[18]։ Սա վարչական ընդունակություններով օժտված մարդ չէր և այդ պաշտոնը ձեռք էր բերել միայն շնորհիվ այն բանի, որ նրան շահը սիրում ու վստահում էր։

Նաջաֆկուլի խանը Երևանում մնաց 7 տարի։ Նա ցոփ կյանք էր վարում և անխնա կողոպտում էր բնակչությանը, դիզելով մեծ հարստություն։ Տարված լինելով միայն հարստություն կուտակելով ու աշխարհիկ վայելքներով, կարճ ժամանակում նա խորը հակակրանք ու դժգոհություն էր ստեղծել իր շուրջ։ 1663 թ. տեղի ունեցավ մի դեպք, որը լիովին խախտեց նրա առանց այն էլ վարկաբեկված հեղինակությունը։ Երբ խանն ընտանիքով գտնվում էր Ապարանի ամառանոցում, հանկարծ լուր է տարածվում, թե Կարսի կողմերից թուրքական զինված ջոկատներն անցել են սահմանը և գալիս են դեպի Ապարանի ամառանոցը։ Երբ սկսվում է խուճապահար փախուստը, խանի խոհարարը թափում է եփած բրինձը և դատարկ կաթսան շալակած փախչում է խանի ետևից։ Այս դեպքից հետո ժողովուրդը խանին տվեց «փիլավթյոքան» (փլավ թափող) մականունը։ Ուրիշ մեկին շահը չէր ների այս խայտառակությունը։ Սակայն իր բարեկամ Նաջաֆկուլի խանին ներեց և Շամախու բեկլարբեկիությունը տվեց նրան, որպեսզի սահմանից հեռու հանգիստ կարողանա «ուտել և վայելել» իրեն շնորհված երկիրը[19]։

Հատկանշական է Մուհամմադ-Թահիր Վահիդի վկայությունն այն մասին, որ Շիրվանի նախկին բեկլարբեկի Մուհամմադի խանը պաշտոնից հեռացվել, կալանքի ենթարկվել և ունեցվածքը հարքունիս էր գրավվել բնակչության անողոք հարստահարության ու կողոպուտի մեջ մեղադրվելով։ Եվ ահա նրա փոխարեն խան էր նշանակվում նույն հատկանիշներով հռչակված Նաջաֆկուլի խանը[20]։

Այս դեպքերից հետո՝ 1663 թ., Երևանի բեկլարբեկիությունը տրվեց Ամիր-Գունա խանի որդիներից ծերունի Արբասկուլի խանին, որը, աղբյուրների վկայությամբ, լավ հարաբերություններ էր Հակոբ կաթողիկոս Ջուղայեցու հետ[21]։ Այդ վերաբերմունքը Հակոբ կաթողիկոսը կարողացել էր ձեռք բերել այն բանից հետո միայն, երբ 7 թուման ստանալուց հետո խանը Շարիաթով հրաժարվել էր Վաղարշապատ գյուղի սեփականության նկատմամբ հայց հարուցելուց։ Դա այն գյուղն էր, որի նկատմամբ վանքի սեփականատիրական իրավունքները 1620 թ. կազմված շարիաթական արձանագրությամբ ընդունել էր Ամիր-Գունա խանը[22]։

---

18 Զաքարիա Սարկավագ, հ. II, էջ 57, հմմտ. Զաքարիա Ագուլեցի, էջ 56, հմմտ. Մուհամմադ-Թահիր Վահիդ, Արբասնամե, Արաք, 1951, էջ 204 (այսուհետև՝ «Աբբասնամե»)։

19 Զաքարիա Սարկավագ, հ. II, էջ 57—59, Զաքարիա Ագուլեցի, էջ 62, «Աբբասնամե», էջ 316։

20 «Աբբասնամե», էջ 316։

21 Զաքարիա Սարկավագ, հ. II, էջ 71, Զաքարիա Ագուլեցի, էջ 62։

22 Հրովարտակներ, հ. II, վավ. 14։

Աբբասկուլի խանը մեռավ 1666 թ.։ Նրա փոխարեն խան նշանակվեց լեզգի իշխանազուն Ալխաս-միրզան, որը զուլամ դառնալուց հետո կոչվում էր Սաֆիկուլի խան[23]։ Բեկլարբեկիության 8 տարիների ընթացքում Սաֆիկուլի խանը ամենասանձարձակ կերպով կողոպտում էր Արարատյան երկրի աշխատավորությանը և կուտակած հարստությունն ու բարիքները առաքում Դաղըստան (Ավարիա)։ Զաքարիա Սարկավագի վկայությամբ՝ նրա ուղարկած այլևայլ բեռներից Դերբենտի խանության ռահդարները 300 թուման միայն մաքս էին գանձել[24]։

Այս խանի և էջմիածնի կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու միջև լուրջ տարաձայնություններ առաջացան։ Խանը ցանկանում էր յուրացնել կամ չնչին գումարով ձեռք բերել կաթողիկոսի ջանքերով կառուցված էջմիածնի մեծ լիճը, որը խոշոր եկամտի աղբյուր էր։ Հակասությունները գնալով ավելի ու ավելի էին սրվում։ Այս ընթացքում Հակոբ կաթողիկոսին հաջողվում է գաղտնի փախչել, գնալ Սպահան և այդ մասին զեկուցել Շահ Սուլեյմանին։ Շահն Ազերբայջանի վեզիր Միրզա Իբրահիմին անմիջապես կարգադրում է Սպահանից գործուղված Սարուխան բեկի հետ միասին գնալ ու ձերբակալել Սաֆիկուլի խանին և բռնագրավել նրա ողջ ունեցվածքը (400 ուղտաբեռ, 30.000 թուման ընդհանուր արժողությամբ)[26]։

1674 թ. հուլիսից մինչև 1675 թ. հոկտեմբերը վերոհիշյալ Սարուխան բեկը մնաց Երևանում՝ որպես ժամանակավոր տեղապահ։ Իսկ 1675 թ. հոկտեմբերի 15-ին Շահ Սուլեյմանը Ջուխուր Սա'դի բեկլարբեկիությունը տվեց Ազերբայջանի (Թավրիզի) նախկին բեկլարբեկի Ռուստամ խան սիփահսալարի որդուն՝ Սաֆիկուլի բեկին, որն իր որդի Ռուստամ-բեկի հետ միասին Ղազվինից եկավ Երևան և ստանձնեց նոր պաշտոնը[26]։

Մեծ տարաձայնություններ և խորը հակասություններ առաջացան այս վերջին Սաֆիկուլի խանի և Երևանի հայ ու ադրբեջանցի բնակչության միջև։ Հասարակության բոլոր խավերի վրդովմունքի առիթ հանդիսացավ խանի բացահայտ հովանավորությունը գողերին և հափշտակիչներին, ինչպես նաև անառակությունը քաջալերող վարքագիծը։ Բացի այդ, հայ բնակչության դեմ սանձազերծած հալածանքները մեծ հուզումներ առաջացրին համաքաղաքացի ադրբեջանցի բնակչության մեջ։ Դա վերածվեց զանգվածային ապստամբության։ Ապստամբները, որոնք իրենց անվանել էին «ղարափաչաներ» (սևասրունք), Ֆաթհ-Ալի բեկի գլխավորությամբ ներխուժեցին բերդ, տնային կալանքի ենթարկեցին խանին, կնքեցին նրա ունեցվածքը և հատուկ պատվիրակություն ուղարկեցին Սպահան՝ զեկուցելու շահին[27]։

Սկզբնաղբյուրներում առկա որոշ տվյալներ թույլ են տալիս ենթադրելու, որ ադրբեջանցի բնակչության ստորին խավերից սկսված այս շարժումը փորձել են օգտագործել դեռևս Ամիր-Գունա խանի ժամանակներից Երևանում

---

23 Զաքարիա Սարկավագ, հ. II, էջ 76, Զաքարիա Ագուլեցի, էջ 68։

24 Զաքարիա Սարկավագ, հ. II, էջ 82։

25 Զաքարիա Սարկավագ, հ. II, էջ 76—83, Զաքարիա Ագուլեցի, էջ 121—122, հմմտ. Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 162։

26 Զաքարիա Սարկավագ, հ. II, էջ 89, Զաքարիա Ագուլեցի, էջ 121—122։

27 Այս ուշագրավ շարժման մանրամասն նկարագրությունը տալիս է Զաքարիա Սարկավագը (հ. II, էջ 102—103), հմմտ. Զաքարիա Ագուլեցի, էջ 135—137։

հաստատված Կաջար ցեղի աղաները, որոնք ձգտում էին օգտագործել ինչպես հայ, այնպես էլ ադրբեջանցի աշխատավորության մեջ առաջացած գժգոհությունները՝ վերստին իշխող գիրք գրավելու Արարատյան երկրում։ Հօգուտ այս ենթադրության է խոսում թեկուզ այն փաստը, որ երբ երկար քննություններից հետո՝ 1679 թ. հունվարի 26-ին, Շահ Սուլեյմանը Երևանի բեկլարբեկիությունը տվեց ծագումով վրացի Զալ խանին, միաժամանակ նրան հրահանգեց Երևան հասնելուն պես ձերբակալել և Սպահան ուղարկել Կաջար յուզբաշի Հիմմաթ-բեկին և նրա որդիներ Իսա խանին, Զաման խանին, Սալահ խանին և Կասըմ խանին, որպես խնդրո առարկա «խռովություններին» գլխավոր կազմակերպիչների։ Կաջարների կողմից Երևանի խանությունը վերստին իրենց ձեռքը ձգելու միտումների մասին է խոսում նաև այն փաստը, որ երբ Վեգի գետի մոտ խանի կողմնակիցների և ապստամբների միջև տեղի ունեցած ընդհարումների ժամանակ վերջիններիս մեջ առաջացած երկպառակությունների հետևանքով Ֆաթհ-Ալի բեկը ձերբակալվում է, նրա կողմնակիցներից շատերը, որոնք Կաջարներ էին, փախչում են դեպի Գանձակ, որտեղ իշխում էին Զիադօղլու-Կաջար ցեղի ամիրները[28]։

Սակայն XVII դ. Արարատյան երկրում ստեղծված յուրահատուկ պայմանները նպաստավոր չէին այնտեղ հաստատված կըզըլբաշ ցեղերի իշխանական ձգտումների համար։ Ինչպես տեսանք, տեղի ունեցած նոր տեղաշարժերից հետո կրկին հայ ազգաբնակչությունը այնտեղ մեծամասնություն էր կազմում։ Իսկ ադրբեջանական հողագործ գյուղացիությունը իր սոցիալական դրությամբ և դասակարգային շահերով առավել կապված էր երկրագործ հայ ռայաթի, քան դավանակից, սակայն իր արտոնյալ վիճակով ավելի խորթ իլաթի (քոչվորության) հետ։ Ուստի իլաթը, հատկապես Շահ Աբբաս Ա-ի ռեֆորմներից հետո, Արարատյան երկրում, որտեղ նա համեմատած հարևան մյուս նահանգների հետ մեծ թիվ չէր կազմում, այս կամ այն քոչվոր ֆեոդալի իշխանության ամրապնդման համար չէր կարող ռազմական հենարան ծառայել։

Էջմիածնի՝ որպես համազգային հոգևոր իշխանության կենտրոնի, հետզհետե հզորացումը ևս կարևոր նշանակություն ուներ և մեծ էր նրա դերը նաև երկրի քաղաքական կյանքում։ Վերահաստատելով և օրինականացնելով իր իրավունքները, Էջմիածնի ամենայն հայոց կաթողիկոսությունը, սկսած XVII դ. 30-ական թվականներից և հատկապես Փիլիպոս Աղբակեցու (1633—1655) և Հակոբ Ջուղայեցու (1655—1680) կաթողիկոսության շրջանում մեծ հեղինակություն և քաղաքական կշիռ էր ձեռք բերել և, ինչպես տեսանք, երբեմն նույնիսկ կարողանում էր որոշիչ դեր խաղալ խաների նշանակման ու հեռացման խնդրում։

1650 թ. ապրիլին Փիլիպոս կաթողիկոսը Շահ Աբբաս Բ-ից ստացավ հատուկ հրովարտակ, որին կցված էր նաև շիա մահմեդականների կրոնական բարձրագույն ատյանի՝ Դիվան-ալ-սադարաթի վճիռը (ֆեթվան), ըստ որի

---

28 Զ ա ք ա ր ի ա Ա գ ու լ ե ց ի, էջ 135։ Ուշադրության արժանի է նույն աղբյուրի հաղորդած մի այլ տեղեկություն, ըստ որի Զալ խանի օրոք իրագործված առաջին մահապատիժը 1679 թ. մարտի 21-ին Կաջար Մուրադ-բեկի սպանությունն է եղել։ Երբ խանը առաջին անգամ բերդից դուրս է գալիս, անցնում Հրազդանի կամուրջն ու գնում շրջելու իր այգիները, նրա մոտ են բերում Մուրադ բեկին, որն իբր մոտակա այգիներից մեկում բռնի տիրացել էր մի կնոջ։ Խանն անմիջապես գլխատել է տալիս նրան (նույն տեղում, էջ 142)։

հայոց եկեղեցուն և հայ հոգևորականությանն էր վերապահվում լսել հայերի միջև տարբեր խնդիրների շուրջ ծագած վեճերն ու ընդունել համապատասխան որոշումներ[29]։ Դա նշանակում էր, որ հայերը քաղաքացիական հարցերում կարող էին իրենք իրենց համայնքի ներսում յոլա դնալ, առանց մահմեդական շարիաթական դատական օրգանների և պետական պաշտոնեության միջամտության։ Դիվան-ալ-սադարաթի վճռի մեջ ասված է, որ, ըստ մարգարեի օրոք հաստատված օրենքի, զիմմիների միջև վեճ առաջանալու դեպքում, նրանք եթե ցանկանում են կարող են դիմել Շար'ի դատարանին, իսկ եթե չեն ցանկանում՝ ազատ են դիմելու «իրենց եպիսկոպոսներին և հոգևորականներին, որպեսզի վերջիններս նրանց վեճը հարթեն»։ «Ուստի որոշվեց,— ասված է այնուհետև հրովարտակում,— որ եթե քրիստոնյաներն իրար մեջ վեճ ունենան և դիմեն իրենց եպիսկոպոսներին կամ քահանաներին, ոչ ոք արգելք չհանդիսանա և նեղություն չպատճառի, իսկ եթե կողմերից մեկը մահմեդական լինի, այդ դեպքում վեճը պետք է հարթեն տեղի Շար'ի անդամների և մահմեդական զազիների միջոցով»[30]։

Պատմողական սկզբնաղբյուրներն ու դիվանական վավերագրերը միաբերան վկայում են, որ թեպետ Սեֆյան շահերը, հարկատու հայ ռայաթներին հնազանդ վիճակում պահելու համար հովանավորում և պաշտպանում էին էջմիածնի կաթողիկոսներին, սակայն Երևանի խաները մեծ մասամբ, իրենց միահեծան իշխանությունն ապահովելու նպատակով, անվերջ խոչընդոտներ էին հարուցում և ձգտում էին խանգարել ու թույլ չտալ էջմիածնին՝ տնտեսապես ավելի հզորանալու։

Այսպես թե այնպես, XVII դ. 60—70-ական թվականներին էջմիածնի վանքն Արարատյան երկրի խոշորագույն կալվածատերերից մեկն էր, որն իր ձեռքում էր կենտրոնացրել նաև վիլայեթի ամենահարուստ մահալում՝ Կարբիում, առկա ոռոգման ցանցի մեծ մասը[31]։ Երբ տնտեսական այս զորեղ դիրքին զուգորդվում էր նաև հոգևոր իշխանությունն ու բնակչության մեծամասնության նկատմամբ նրան վերապահված դատական իրավունքը, ապա Երևանի խաներն ի դեմս էջմիածնի կաթողիկոսների ունեին այնպիսի ախոյաններ, որոնց հետ մեծ մասամբ տնտեսական հարցերի շուրջ ծագող վեճերն ու բախումները կարող էին նրանց համար անցանկալի հետևանքներ ունենալ։

Այս տեսակետից բնորոշ են XVII դ. վերջին երկու տասնամյակները։ Այդ 20 տարիների ընթացքում իրար հաջորդած 5 խաներից միայն Զալ խանն էր, որ իշխեց շուրջ 10 տարի, շնորհիվ այն բանի, որ, ծագումով վրացի լինելով, համեմատաբար հանդուրժողական քաղաքականություն էր վարում և լավ հարաբերություններ մեջ էր էջմիածնի հետ։

Սակայն 1689 թ., հավանաբար նորից կաշարների դրդմամբ, Զալ խանը հեռացվեց պաշտոնից, և շուրջ 2,5 տարի, որպես տեղապահ, Երևանում իշ-

---

29 Հրովարտակներ, հ. II, վավ. 41։

30 Հայ համայնքի իրավական վիճակին վերաբերող այս իրողության մասին է խոսում այն փաստը, որ Մատենադարանի կաթողիկոսական դիվանի սեփականության, ժառանգության և այլ հարցերի վերաբերյալ 1000-ից ավելի շարիաթական արձանագրությունները հիմնականում տրված են այն դեպքերում միայն, երբ կողմերից երկուսը կամ մեկն ու մեկը մահմեդական է եղել։

31 А. Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII веках, Ереван, 1972, стр. 114—151.

խում էր Նախջևանի Մուհամմադ-Ռեզա խանի որդի Մուրթուզակուլի խանը[32]։ Սրա օրոք նորից սաստկացան կրոնական հալածանքները։ Արգելք դրվեց գինեգործության վրա, որը Արարատյան դաշտի հայ բնակչության հիմնական զբաղմունքներից էր[33]։

Մուրթուզակուլի խանը միաժամանակ մեծամեծ կաշառքներով ջանում էր ձեռք ղցել Երևանի բեկլարբեկիությունը։ Սակայն կարճ ժամանակի ընթացքում նա իր զրգռիչ գործունեությամբ մեծ դժգոհություն էր առաջացրել բնակչության բոլոր խավերի մեջ, որի մասին դիտեին նաև Սպահանում։

Թեև XVII դ. վերջին տասնամյակների խանների հաջորդականության վերաբերյալ Զաքարիա Սարկավագի հաղորդած տեղեկությունները կարոտ են ժամանակագրական ճշգրտման, սակայն Կարբիի Ս. Աստվածածին եկեղեցու շինությանը վերաբերող արձանագրությունը գալիս է հաստատելու, որ իրոք Մուրթուզակուլի խանի տեղապահությունը տևել է 2,5 տարի։ Արձանագրության մեջ ասված է, որ եկեղեցու կառուցումը սկսվել է «հայոց ՌՃԽ (1691) ամին..., ի բռնակալութեան երկրիս Արարատեան Զօհրայ խանին»[34]։

Որքանով որ Զաքարիա Ագուլեցին տալիս է Զալ խանի բեկլարբեկիության ճշգրիտ թվականը (1679 թ. հունվար 26), իսկ Կարբիի արձանագրության մեջ 1691 թ. հիշվում է Զոհրա խանը, ապա ճշգրտվում են նաև Մուրթուզակուլի խանի տեղապահության տարիները (1689—1691)։ Երևանի խաների ժամանակագրական ցուցակում Հ. Շահխաթունյանցը, հենվելով իր իսկ հրատարակած Կարբիի սույն արձանագրության վրա, Զոհրա խանին հիշում է 1691 թ. ներքո[35]։ Սակայն նա սխալվում է նրանից հետո հիշատակելով Մուհամմադկուլի խանին՝ որպես տեղապահ 3 տարի։ Շփոթմունքն առաջացել է այն բանից, որ Զաքարիա Սարկավագը հաջորդաբար թվելով Զալ խանին հաջորդած խաների անունները, մինչև 1698 թ., մոռացության է տվել կամ ինչ-ինչ պատճառներով դուրս է թողել Զոհրա խանին, որի խանության վերաբերյալ, ինչպես տեսանք, կա վիմագրական հավաստի վկայություն։

Նույն արձանագրությունից պարզվում է նաև, որ Զոհրա խանը ևս երկար չի իշխել Երևանում։ Արձանագրության վերջում խոսվում է այն մասին, որ եկեղեցու շինարարությունն ավարտվել է հայոց «ՌՃԽԲ (1693) թուին, յաւուրս նոյն հայրապետի (Նահապետ կաթողիկոս Եդեսացի 1691—1705—Հ. Փ.) և առաջնորդի (Հովհաննավանքի վանահայր տեր Սարգիս եպիսկոպոս—Հ. Փ), բայց ոչ նոյն թագավորին և իշխանին»[36]։ Եվ իրոք, 1663 թ.՝ Շահ Սուլեյմանի մահից հետո, Սպահանում գահ է բարձրանում Շահ Սուլթան-Հուսեյնը, որը և, ինչպես հաստատում է Զաքարիա Սարկավագը, Երևանի բեկլարբեկի է նշանակում նախկինում նույն վիլայեթի պետական հարկերի գլխավոր վերակացու եղած Մուհամմադկուլի խանին[37]։

---

32 Զաքարիա Սարկավագ, հ. II, էջ 128, 134։

33 Նույն տեղում։

34 Հ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի (այսուհետև՝ Հ. Շահխաթունյանց), հ. II, Վաղարշապատ, 1842, էջ 117, հմմտ. Կ. Կոստանյան, Վիմական տարեգիր, Պետերբուրգ, 1913, էջ 197։

35 Հ. Շահխաթունյանց, էջ 139։

36 Նույն տեղում, էջ 117։

37 Զաքարիա Սարկավագ, էջ 135։

Զաքարիա Սարկավագը դրվատանքով է խոսում այս խանի մասին, ընդգծելով հատկապես անիրավությունների սանձումը, ընդհանուր ապահովությունը և հարկային ավելի մեղմ քաղաքականությունը։ Նոր խանի եռամյա տիրապետության համեմատաբար տանելի վիճակը նա բացատրում է այն հանգամանքով, որ իր նախկին պաշտոնի բերմամբ Մուհամմադկուլի խանը «գիտեր ամենայն նեղութիւնք և տառապանք աշխարհին և ճշդիւ կողոպտումն և բազմութիւն հարկացն», ուստի և «բարութիւն ցուցեալ ամենայնի և արար ուղղութիւն և սէր առ ռամիկ հարկատուքն... և ոչ առաքէր հարկահանս յերկիրն, զի մի նեղեսցեն զռամիկսն, այլ ինքեանք ժողովեալ առ սակաւ-սակաւ հատուցեն»[38]։

Մուհամմադկուլի խանն իր իշխանության վերջին տարում շահի հրահանգով մասնակցում է վրաց Գեորգի թագավորի դեմ կազմակերպված պատժիչ արշավանքներին։ Այս կռիվներից հետո է, որ Շահ Սուլթան-Հուսեյնը, ըստ երևույթին հաշվի առնելով Մուհամմադկուլի խանի զինվորական ծառայությունները, կանչում է նրան իր մոտ և նշանակում թուֆանկչիների (հրացանակիր զինվորների) ընդհանուր հրամանատար (թուփանկչիբաշի)։ Եթե Մուհամմադկուլի խանի բեկլարբեկիությունը տևել է 3 տարի, ապա նրա ազատումը պետք է տեղի ունեցած լինի 1696 թ.։

Ինչպես երևում է, հենց այդ թվականին էլ Զուխուր-Սա'դի նոր բեկլարբեկի է նշանակվում Ֆազլ-Ալի խանը, որը նույն Զաքարիա Սարկավագի վկայությամբ «էր ի թոռանց Ամիր-Գունա խանի, այր ագահ և ռիշտ, կողոպտող և գերփող և կաշառօղ, անիրաւ ի դատաստանի և կաշառօք թիւրէր զդատաստանն»։ Ըստ նույն աղբյուրի, սրա օրոք երկրում կատարյալ անիշխանություն էր տիրում և «էր տագնապ մեծ յաշխարհին Արաբատեան»[39]։

Ստույգ տեղեկություններ չկան թե քանի տարի է տևել Ֆազլ-Ալի խանի բեկլարբեկիությունը։ Զաքարիա Սարկավագն իր պատմությունն ավարտում է 1698 թ., նույն խանի օրոք։ Հ. Շահխաթունյանցը, որ առհասարակ խաների հերթականության համար հիմք է ընդունում իր օգտագործած աղբյուրի թվականը, այս խանի անվան դիմաց նշում է 1699 թ.։ Այդ նշանակում է, որ ինչ որ տեղ այդ թվականին դեռ հիշված է Ֆազլ-Ալի խանը[40]։ Այնուհետև, մինչև 1722 թ., որը նա սխալմամբ համարում է օսմանցիների կողմից Երևանի գրավման թվականը, 1709 թ. հիշված են Մեհր-Ալի խանի, իսկ 1719 թ.՝ Ալլահկուլի խանի անունները[41]։

Խաների այս հերթականության հիմք է ծառայել հավանաբար Սիմեոն Երևանցու այն վկայությունը, որ Էջմիածնի վանքը հիջրի 1121 (1709) թ. Մեհր-Ալի խանից, իսկ 1134 (1722) թ. Ալլահկուլի խանից ստացել է հրամանագրեր (թա'լիկա), Քասախ գետի ջրի նկատմամբ վանքի սեփականատիրական իրավունքների մասին[42]։ Այժմ, սակայն, հնարավոր է մասնակիորեն ճշգրտել XVIII դ. սկզբի, մինչև 1724 թ. թուրքական նվաճումն ընկած տասնամյակների ժամանակագրությունը։

---

38 Նույն տեղում։

39 Նույն տեղում։

40 Հ. Շահխաթունյանց, էջ 139։

41 Նույն տեղում։

42 Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 229—230։

Այսպես, անանուն մի ժամանակագրի վկայությամբ, 1705 թ. Մակվի բերդի վերանորոգումը կատարվել է «հրամանաւ շահ Հիւսէին թագաւորին և յօգնականութիամբ Երևանայ Ապդլմահմատ [Աբդ-ուլ-Մուհամմադ] խանին»[43]։ Հաշվի առնելով նույն վարքագծով նախորդ խաների կարճատև իշխանությունը, պետք է ենթադրել, որ Ֆազլ-Ալի խանը ևս երկար չի իշխել և հավանաբար դարասկզբին հեռացվել է պաշտոնից և նրան փոխարինելու է եկել Աբդ-ուլ-Մուհամմադ խանը։

Ցավոք «Կաթողիկոսական դիվանում» չեն պահպանվել Սիմեոն Երևանցու վկայակոչած 1709 և 1722 թթ. հրամանագրերը։ Սակայն Քասախ գետի ջրերի օգտագործման իրավունքի մասին կան ավելի ուշ՝ 1725—1735 թթ. թուրքական տիրապետության շրջանից պահպանված վավերագրեր։ Այդ թվականներին ևս վեճեր են եղել, և Էջմիածնի կաթողիկոսները հիշյալ հրամանագրերը հավանաբար ներկայացրել են թուրք փաշաներին և դրանց հիման վրա ստացել նոր հրամանագրեր[44]։

Պետք է կարծել, որ Սիմեոն Երևանցին սխալմամբ է առաջին հրամանագիրը վերագրել Մեհր-Ալի խանին, իսկ վերջինը՝ Ալլահկուլի խանին։ Ստույգ տեղեկություն կա, որ 1724 թ. թուրքական արշավանքների օրերին Երևանի բեկլարբեկին Մեհր-Ալի խանն էր։ Դա Երևանի հերոսական դիմադրության մանրամասն նկարագրության հեղինակ, Աբրահամ Երևանցու հավաստի վկայությունն է։ Իր «Պատմության» մեջ նա բազմիցս հիշում է Մեհր-Ալի խանին անվանելով՝ «իշխանն Երևանայ Միհրալի», պատմելով նաև, թե ինչպես նա կաթողիկոս Աստվածատուր Համադանցու միջնորդությամբ Երևանի բերդը հանձնում է Աբդուլլա-փաշային[45]։

Արդ, եթե ընդունելու լինենք, որ Աբդ-ուլ-Մուհամմադից հետո մինչև օսմանցիների նվաճումը Երևանում իշխել են վերոհիշյալ երկու խաները, ապա կարելի է հաստատապես ասել, որ դրանցից վերջինը՝ եղել է Մեհր-Ալի խանը։ Ալլահկուլի խանի ինքնության և իշխանության ժամանակամիջոցի մասին ստույգ տեղեկություններ չունենք։ Այս պարագաներում հայտնի չէ նաև Մեհր-Ալիի կողմից Երևանի բեկլարբեկիությունը ստանձնելու թվականը։ Գիտենք միայն, որ բերդի գրավումից հետո (1724 թ.), Աբդուլլա-փաշան «զՄիհրալին և զայլ առաջակայս խաղաղութեամբ արձակեաց՝ երթալ, ուր և կամեսցին»[46]։

Այսպես ավարտվեց Սեֆյան բեկլարբեկիների ավելի քան 200 ամյա տիրապետությունը Արարատյան երկրում, որի առաջին հարյուրամյակն անցավ երկարատև պատերազմների ու քաղաքական անկայուն պայմաններում, իսկ երկրորդ հարյուրամյակը սկսվեց բուռն իրադարձություններով և բնակչության զանգվածային տեղաշարժերով։

Անհրաժեշտ է նշել սակայն, որ եթե հարյուրամյակի առաջին կեսին բնորոշ էր երկրի պարբերական վերաբնակեցումը, մեծ գաղթից խուսափած և մոտակա շրջաններում ապաստանած, իսկ առավել ևս Արևմտյան Հայաստանից բռնի քշված հայ ռայաթներով, ապա 50—60-ական թվականներից սկսած

---

43 «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հ. I, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 328։

44 Ս՛ատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 304 և 344։

45 Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն, Երևան, 1938, էջ 10—12, 14, 24—26։

46 Նույն տեղում, էջ 26։

Արարատյան երկրում նկատվող սոցիալ-տնտեսական և էթնիկական նոր տեղաշարժերն իրենց բնույթով արմատապես տարբերվում էին նախորդներից և կոչված էին շրջադարձային դեր խաղալու երկրի հետագա քաղաքական կյանքում։

Կաթողիկոսական դիվանում պահպանված մի ամբողջ խումբ վավերագրեր խոսում են Արարատյան երկրում թափառող քոչվորության, մեծ գաղթի տարիներին ամայացած հայկական գյուղերում մշտական բնակություն հաստատելու բազմաթիվ փաստերի մասին։ 1650 թ. էջմիածնի լիազոր-ներկայացուցիչ Թումանը Բաթռինջ գյուղի հայ ռայաթների անունից Բարձրագույն դիվանին ներկայացրած խնդրագրում բողոքում է քոչվոր ցեղերի կողմից վանքապատկան գյուղերի հողերը յուրացնելու և նախկին հայաբնակ գյուղերում բռնի բնակություն հաստատելու դեմ։ Խնդրագրում ասված է, որ թեև բոլորին հայտնի է, որ Բաթռինջ գյուղը հայկական գյուղ է եղել, որտեղ նրանք իրենց եկեղեցին ունեն, սակայն «անիծյալ խոնդկարի (թուրքաց սուլթանի)» տիրապետության տարիներին բնակիչները ստիպված են եղել թողնել հեռանալ։ Այժմ քոչվորները (թարաքամաներ) եկել նստել են այդտեղ և հայերին թույլ չեն տալիս գալ և բնակվել իրենց գյուղում[47]։

Նույնանման մեկ ուրիշ բողոքագրում (1674 թ.) խոսվում է Վաղարշապատի մոտ գտնվող Քյուլթափա գյուղում հաստատված Հաջիկարալու կոչվող ցեղի մասին, որը բռնի օգտվում էր վանքապատկան ջրերից[48]։ 1704 թ. մի այլ վավերագրում ավելի մանրամասն տեղեկություններ կան Կարբիի նահիայի գյուղերում բնակություն հաստատած քոչվորական Փիրիլու, Թաթարլու և Այրումլու համայնքների մասին[49]։ Ինչպես Զուխուր-Սա'դի վիլայեթի, այնպես նաև XVII դ. նրան ենթակա Նախջևանի օլքայում տեղի ունեցած նման դեպքերի մասին են խոսում Կաթողիկոսական դիվանում պահպանված մի շարք այլ վավերագրեր[50]։

Անհրաժեշտ է նշել սակայն, որ Կաթողիկոսական դիվանում պահպանվել են միայն վանքապատկան գյուղերին վերաբերող վավերագրերը։ Կասկածից դուրս է, որ նույն պրոցեսը ավելի անարգել տեղի էր ունենում նաև այլ մասնատիրական, ինչպես նաև պետական (դիվանի) կամ թիուլային գյուղերում, որոնց վերաբերյալ մեր ձեռքի տակ գրավոր տվյալներ չկան։

Հետագա տասնամյակների դիվանական և մատենագրական աղբյուրներից պարզ երևում է, որ Արարատյան երկրում քոչվորության բնավորվելու և հողագործության անցնելու պրոցեսը համատարած բնույթ է կրել։ Այդ աղբյուրներում կան հիշատակություններ այն մասին, որ Երևանի խանության Կարբիի, Գըրխբուլաղի, Վեդիի, Սուրմալուի և ուրիշ մահալների բազմաթիվ գյուղերում բնակվում էին Սա'դլու, Ալփավութ, Այրումլու, Կազախլու (Կաջար), Աղջա-կոյունլու (Կաջար), Բայաթ, Մուհամմադխանլու, Հաջիկարալու և բազմաթիվ այլ քոչվոր ցեղերից զատված հողագործ ռայաթների բավական խոշոր համայնքներ։

---

47 Հրովարտակներ, հ. II, վավ. 40։

48 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 162։

49 Նույն տեղում, թղթ. 1բ, վավ. 214։

50 Նույն տեղում, թղթ. 2ա, վավ. 63, 69, թղթ. 2բ, վավ. 113 և այլն։

Այս երևույթը, անշուշտ, հիմնականում հետևանք էր տևական խաղաղության։ Հիշյալ ցեղերը ղրկված լինելով պատերազմների ժամանակ ձեռք բերվող ռազմական ավարից և ընդհանրապես սկսած Շահ Աբբաս Ա-ի ժամանակներից հետզհետե ավելի կորցնելով իրենց ռազմական նշանակությունը, այն վայրերում, որտեղ նրանք չունեին կայուն յայլաղներ և կըշլաղներ, ստիպված էին տրոհվել և առանձին գերդաստաններով ու համայնքներով հաստատվել այս կամ այն գյուղում և զբաղվել հողագործությամբ։ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միանալուն անմիջապես հաջորդած տարիների վիճակագրության մեջ պարզ երևում են նախորդ դարերում տեղի ունեցած վերոհիշյալ էթնիկական տեղաշարժերի հետևանքները[51]։

1725—1827 թթ. Արարատյան երկրում տեղի ունեցած վարչա-քաղաքական փոփոխությունների պատմության և օտար տիրապետության ժամանակագրության հարցերին կանդրադառնանք առանձին հոդվածով։ Նշենք միայն, որ բնակչության էթնիկական կազմի այսօրինակ վերափոխությունը նպաստեց նաև քոչվոր հողատերերի դիրքերի ամրապնդմանը։ XVII դ. վերջերին նրանք արդեն ձեռք էին բերել մեծ քանակությամբ մուլքային տիրույթներ և ամուր կերպով բնավորվել երկրի առավել բերքառատ շրջաններում։ Հենվելով երկրում կայուն բնակություն հաստատած ցեղակից զանգվածների վրա և օգտվելով կենտրոնական զորեղ իշխանության բացակայությունից, երկարատև պայքարից հետո, 1765 թ. Կաջար ավագանուն հաջողվեց ձեռք գցել Երևանի խանությունը, որտեղ նրանք կարողացան իշխել մինչև երկրի ազատագրումը ռուսական բանակի կողմից։

ИНОЗЕМНОЕ ГОСПОДСТВО В АРАРАТСКОЙ ОБЛАСТИ (XVII век)

АКОП ПАПАЗЯН

Резюме

Анализ данных персоязычных нарративных источников и архивных документов позволяет выявить последствия длившихся десятилетиями этнических перемещений и важных административно-политических изменений, которые явились результатом бурных событий, имевших место в начале XVII в., а также уточнить хронологию политических событий и годы правления сменявших друг друга беглербеки в период наибольшей стабильности и длительности господства Сефевидского Ирана. За эти 120 лет в Араратской земле или Чухур-Са'де правили следующие ханы: Амир-гуна-хан, Каджар (1604—1625), Тахмаспкули-хан, каджар (1625—1635), Кялб-Али-хан (1636—1639), Мухам-

---

51 И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852, стр. 599—602.

мадкули-хан-Кетуг (1639—1647), Кей-Хосров-хан, грузин, Мухаммадкули-хан (1652—1656), Наджафкули-хан (1656—1663), Аббаскули-хан, каджар (1663—1666), Сафикули-хан-Алхас мирза (1666—1674), Сарухан-бек, наместник (1674—1675), Сафикули-хан (1675—1679), Зал-хан, грузин (1679—1689), Муртуза кули-хан, наместник (1689—1691), Зохра-хан (1691—1693), Мухаммадкули-хан (1693—1696), Фазл-Али-хан, каджар (1696—), Абдул-Мухаммад-хан (1765—), Аллахкули-хан (—1709), Мехр-Али-хан (—1724).